ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 19-ին կնքված ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի հունվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված 2-րդ խմբաքանակի մատակարարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված 2-րդ խմբաքանակի ապրանքի մատակարարման նպատակով 29.01.2015թ. կնքվել է համաձայանագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված 2-րդ խմբաքանակի ապրանքի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
19.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «29» հունվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Սիսթեմ Սելինգ Ընդ Թրեյդ Սերվիս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Վ.Հովհաննեսյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 19.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 9.1 կետին համապատասխան հաստատել Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված 2-րդ խմբաքանակի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Գնորդը պայմանագրով նախատեսված մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.4. 19.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2014 թվականի դեկտեմբերի 19-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	"Սիսթեմ Սելինգ Ընդ Թրեյդ Սերվիս" ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Աղամյան-1	Ք.Երևան, ՀԱԹ Բ2, 129-շենք, բն.28
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 01845094
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 2050422236721001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	"Սիսթեմ Սելինգ Ընդ Թրեյդ Սերվիս" ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	Վ.Հովհաննեսյան

Հավելված
Հաստատված է
«19» դեկտեմբերի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՊԸԱՊՁԲ-14/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
«Դրակոն –Մ» տեսակի կապարակնիք A 0100001-A0200000	4269	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	8 774 661	**8 774 661**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ ֆինանսների նախարարություն

Ք.Երևան, Մ.Ադամյան-1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013574018, 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Արզումանյան

ՎԱՃԱՌՈՂ
"Սիսթեմ Սելինգ Ընդ Թրեյդ Սերվիս"
ՍՊԸ
Ք.Երևան, ՀԱԹ Բ2, 129-շենք, բն.28
ՀՎՀՀ 01845094
Հ/Հ 2050422236721001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

"Սիսթեմ Սելինգ Ընդ Թրեյդ Սերվիս"
ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ.Հովհաննեսյան